

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ՄՏԱԿՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ  
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀԻ

**ՈՐՈՇՈՒՄ**

№2022-3-5-Ա

ք. Երևան

28.02.2022թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գրասենյակի բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաև բողոքարկման խորհուրդ) 2022 թվականի փետրվարի 28-ի նիստում քննարկեց 2021 թվականի նոյեմբերի 29-ին արտոնագրային հավատարմատար Անդրանիկ Խաչիկյանի կողմից ներկայացված՝ EURO MAST INDUSTRIES S.R.L., societate comercială ընկերության (Str. Sfintul Nicolae nr. 4, municipiul Rădăuți Județul Suceava, RO) «Balkan Pharmaceuticals» (IR1500717) ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Ապրանքային նշանի գրանցումը մերժվել է հետևյալ հիմքերով.

«Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: Տվյալ դեպքում հայտարկված ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման է Հայաստանի Հանրապետությունում միջազգային գրանցման հիման վրա պահպանվող «Balkanpharma» ("Actavis" EAD "Atanas Dukov" Str. 29 BG-1407 Sofia (BG) IR 739928, IR 739930, IR 739929) համակցված ապրանքային նշաններին: ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 1017-Ն որոշմամբ հաստատված «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 131-րդ, 132-րդ կետերի համաձայն համակցված ապրանքային նշանների նմանությունը որոշելիս հաշվի է առնվում դրանց մեջ առկա բառային տարրերի նմանության հարցն առանձին վերցված, եթե դրանց մեջ տվյալ տարրերը հանդիսանում են հիմնական ընկալման տարրեր կամ տվյալ նշանների՝ այսպես կոչված «առաջնային ընկալման» տարրեր կամ «անվանումներ», ինչպես նաև համակցված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման, եթե առկա է ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշան, որի հիմնական ընկալման բառային տարրը (Balkanpharma) շփոթելու աստիճանի նման է հայտարկված

նշանի հիմնական ընկալման բառային տարրին (Balkan Pharmaceuticals): Այս դեպքում հայտարկված ապրանքային նշանը կարող է գրանցվել միայն ավելի վաղ առաջնության թվական ունեցող իրավական պահպանություն ստացած ապրանքային նշանի իրավատիրոջ համաձայնությամբ: Անդրադառնալով Ձեր նկատառումներին, առ այն, որ «Balkan Pharmaceuticals» արտահայտությունն իրենից ներկայացնում է դիսկլամացվող տարր, ցանկանում ենք տեղեկացնել, որ ավելի վաղ ապրանքային նշանի «Balkanpharm» գրառմանը տրվել է բացառիկ իրավունք, որը հանդիսանում է «Balkan Pharmaceuticals» արտահայտության կրճատ ձևը: Ուստի այն չի կարող դիսկլամացվել և տրամադրվել մեկ այլ սուբյեկտի:

Կոլեգիայի նախագահը բողոքարկման խորհրդի քննարկմանը ներկայացրեց բողոքի նախնական քննարկման արդյունքներն մասին, որ եվրոպական և այլ երկրներում մերժված և հակադրված նշանները գրանցվել են: Դա հիմք ընդունելով թերևս այն կարող է նաև գրանցվել ՀՀ-ում: Խորհրդի մի քանի անդամներ առաջարկեցին մերժված համակցված ապրանքային նշանը գրանցել «Balkan Pharmaceuticals» արտահայտությանը, ինչպես նաև դրա մեջ մտնող առանձին բառերին ինքնուրույն պահպանություն չտրամադրելով:

Բողոքարկման խորհրդի անդամներից մի քանիսն էլ ներկայացրեցին այլ կարծիք այն մասին, որ հակադրված նշանների առկայությունը կարող է խոչընդոտ հանդիսանալ «Balkan Pharmaceuticals» համակցված ապրանքային նշանի գրանցման համար:

Արտոնագրային հավատարմատար Անդրանիկ Խաչիկյանը համաձայն էր կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Փորձաքննության բաժնի պետը նշեց, որ ներկայացված փաստարկները կարող են հիմք հանդիսանալ հայտարկված նշանի գրանցման համար և համաձայնվեց կոլեգիայի նախնական քննարկման արդյունքների հետ:

Ամփոփելով ընդհանուր քննարկումը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 2012 թվականի նոյեմբերի 8-ի N1501-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհրդում բողոքների քննարկման կարգի» 71-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներով՝ բողոքարկման խորհուրդը քվեարկության արդյունքում 4 կողմ 3 դեմ և մեկ ձեռնպահ.

### **Ո Ր Ո Շ Ե Ց**

Մերժել արտոնագրային հավատարմատար Անդրանիկ Խաչիկյանի կողմից ներկայացված «Balkan Pharmaceuticals» (IR1500717) ապրանքային նշանի գրանցումը

մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը և կրկնական փորձաքննության որոշումը թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով ՀՀ վարչական դատարանում՝ դրա ստացման օրվանից վեցամսյա ժամկետում:

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ  
ՆԱԽԱԳԱՀ

ՌԱՖԱՅԵԼ ԳԵՎՈՐԳՅԱՆ